Կարգապահական գործ թիվ ԿԳ-21021

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի հունվարի 25-ի թիվ 4-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/02-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԹԵՀՄԻՆԵ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Լիլիթ Ղազանչյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Ռուբեն Հակոբյանի, Կարեն Մեժլումյանի, Մարինե Ֆարմանյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանին (արտոնագիր՝ թիվ 1214) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Նելլի Սիրեկանյանը և Հայկազ Սիրեկանյանը **(այսուհետ նաև՝ Դիմողներ),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել են, որ դիմել են փաստաբան Թեհմինե Հովսեփյանին **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** իրենց փաստաբանական ծառայություններ մատուցելու համար: Վերջիններս հայտնել են, որ 10.08.2021թ. վճարել են փաստաբանին գումարի բռնագանձման հայց ներկայացնելու և դատարանում իրենց շահերը պաշտպանելու համար, սակայն դրա անհրաժեշտությունը վերանալու կապակցությամբ 16.08.2021թ. փաստաբանին խնդրել են լուծել պայմանագիրը և վերադարձնել վճարված գումարը: Փաստաբանը հրաժարվել է վերադարձնել գումարը, ուստի խնդրում են վերջինիս ենթարկել պատասխանատվության, ինչպես նաև վերադարձնել գումարը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 27.09.2021թ. թիվ 228-Ա/ԿԳ-21021 որոշման հիման վրա

«Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերության պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ(կարգապահական գործ թիվ ԿԳ- 21021):

30.09.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Թադևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողները բացատրություն չեն ներկայացրել՝ թեև պատշաճ ծանուցված են եղել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողները ներկայացել են՝ պնդելով դիմումով իրենց կողմից ներկայացվածը:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

05.10.2021թ-ին փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանը ներկայացրել է գրավոր բացատրություն, որով հայտնել է հետևյալը.

Նելլի Սիրեկանյանը դիմել է իրեն՝ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

11.08.2021 թվականին կազմվել է լիազորագիր և կնքվել պայմանագիր և նույն օրը 11.08.2021 թվականին, որպես Սիրեկանյանների փաստաբան առաջարկ է ուղարկել Արթուր Գևորգյանին, առաջարկելով՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 18-ը գումարը վերադարձնել:

Նելլի Սիրեկանյանը Փաստաբանին հայտնել է, որ Արթուր Գևորգյանը գումարի մի մասը վերադարձրել է 14.08.2021 թվականին, իսկ մնացած մասը 18.08.2021թվականին:

Փաստաբանը նշել է նաև, որ կնքված պայմանագրում հաստակ նշված է՝ ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված, եթե արտադատարանական կարգով խնդիրը ստանում է լուծում: Պայմանագրի լուծման դեպքում վճարված գումարը վերադարձման ենթակա չէ:

Պալատի խորհրդի նիստին Փաստաբանը ներկայացել է և ըստ էության հաստատել է իր կողմից նախկինում ներկայացված դիրքորոշումը:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 28.10.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 29.10.2021թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 25.01.2022թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

Դիմողների և Փաստաբանի միջև 11.08.2021 թվականին կազմվել է լիազորագիր և կնքվել քաղաքացիական և վարչական գործերով ներկայացուցչություն իրականացնելու վերաբերյալ պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է կողմերի ներկայացրած լիազորագրի և պայմանագրի պատճենով, ինչպես նաև կարգապահական նիստի ընթացքում տրված բացատրություններով:*

Ծառայությունների դիմաց Դիմողները Փաստաբանին վճարել են 500.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական գործով ներկայացված թիվ 210810083778026 փոխանցման անդորրագրով:*

Պայմանագրով նախատեսված է դրույթ, համաձայն որի փաստաբանի կողմից մատուցած ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված, եթե արտադատական կարգով խնդիրը լուծում է ստանում: Պայմանագրի լուծարման դեպքում վճարված գումարը ենթակա չէ վերադարձման*: Սույն փաստը հաստատվում է կողմերի կողմից ներկայացված պայմանագրի պատճենով ինչպես նաև կողմերի՝ կարգապահական նիստի ընթացքում ներկայացրած բացատրություններով:*

11.08.2021թ. Փաստաբան Թեհմինե Հովսեփյանի կողմից ուղարկվել է գրություն՝ ուղված Արթուր Վահագնի Գևորգյանին, որտեղ փաստաբանի կողմից առաջարկվել է սույն վիճելի իրավահարաբերությունը նախքան դատարան դիմելը լուծել արտադատական կարգով: *Սույն փաստը հաստատվում է փաստաբանի կողմից բացատրությանը կից ներկայացված և Ա.Գևորգյանին ուղարկված 11.08.2021թ. գրության պատճենով և «ՀայՓոստ» փոստային ծառայության կողմից տրված հետադարձ ծանուցագրի պատճենով:*

Գրության հիման վրա Ա.Գևորգյանը ամբողջությամբ վերադարձրել է գումարը 18.08.2021թ.: *Սույն փաստը հաստատվում է փաստաբանի ներկայացրած բացատրությունով ինչպես նաև կողմերի կողմից կարգապահական նիստի ընթացքում տրված բացատրություններով:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 25.01.22թ. տեղեկանքի համաձայն՝ փաստաբան **Թեհմինե Մերուժանի Հովսեփյանը** (արտոնագիր՝ թիվ 1214) փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.10.2011թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, չհաշված սույն կարգապահական գործի:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել,* ***եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:***

Տվյալ դեպքում խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ ուսումնասիրելով կարգապահական գործին կցված բոլոր նյութերը, անվիճելի է այն հանգամանքը, որ կողմերը կնքել են ծառայությունների մատուցման պայմանագիր, որում սահմանված է եղել՝ «*ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված, երբ խնդիրը արտադատական կարգով լուծում է ստանում: Պայմանագիրը լուծվելու դեպքում վճարված գումարը ետ չի վերադարձվում*»: Հետևաբար, կողմերը իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսել են այլ կանոն, որից հետևում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերությամբ նախատեսված ընդհանուր կանոնը չի կիրառվում, քանի որ կողմերը այլ կանոն են

սահմանել ծառայությունների մատուցման պայմանագրով, մասնավորապես՝ նախատեսել են, որ Պայմանագիրը լուծվելու դեպքում վճարված գումարը ետ չի վերադարձվում:

Վերոնշյալ հիմք ընդունելով Խորհուրդն գտնում է, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.8.4 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Խորհրուրդն նաև արձանագրում է, որ խնդիրն արտադատական կարգով լուծում է ստացել և Ա.Գևորգյանը 18.08.2021թ. ամբողջությամբ վերադարձրել է գումարը դիմողներին:

Կարգապահական նիստի ընթացքում դիմողները բարձրացրել են այն հարցը, թե արդյո՞ք ողջամիտ էր փաստաբանի կողմից ծառայության դիմաց պահանջած գումարը, ինչի հետ կապված՝ Խորհուրդը արձանագրում է, որ ելնելով պայմանագրի ազատության սկզբունքից (քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437 հոդվածներ) պայմանագրի գինը կողմերը որոշում են փոխադարձ համաձայնությամբ, հետևաբար փաստաբանի վարձատրության ողջամտության հանգամանքը դուրս է խորհուրդի լիազորությունների շրջանակից:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Կանոնագրքի 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով՝ պայմանագիրը լուծելիս հոնորարի մասը չվերադարձնելու վարքագիծը ստուգելու փաստերի առթիվ:

Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն փաստաբանի օգտին:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Թեհմինե Մերուժանի Հովսեփյանի (արտոնագիր՝ թիվ 1214) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Լիլիթ Ղազանչյան

25 հունվարի 2022թ.
թիվ ԿԳ/02-Ա
ք. Երևան